



HY

Մատնահետքեր եւ Eurodac

Տեղեկատվություն երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր անօրինական կերպով բնակվում են անդամ պետությունում՝ համաձայն թիվ 603/2013 կանոնակարգի (ԵՄ) 29(3)-րդ հոդվածի

Եթե հայտնաբերվում է, որ անօրինական կերպով բնակվում եք դուբլինյան երկրում¹⁾, ապա իշխանությունները կարող են վերցնել Ձեր մատնահետքերը և հանձնել մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: Դա կատարվում է միայն այն նպատակով, որ պարզվի, թե արդյոք նախկինում դիմել եք ապաստանի համար: Ձեր մատնահետքերի տվյալները չեն պահվի Eurodac տվյալների բազայում, սակայն եթե նախկինում դիմել եք ապաստանի համար այլ երկրում, Ձեզ կարող են ետ ուղարկել տվյալ երկիր:

Եթե Ձեր մատնահետքերը հստակ չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը կարող են հետագայում կրկին վերցվել:

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Ձեր տվյալները կստանա միայն Eurodac կենտրոնական համակարգը: Եթե ապագայում ապաստան խնդրեք այլ դուբլինյան երկրում, ապա Ձեր մատնահետքերը կրկին կվերցվեն՝ Eurodac փոխանցելու նպատակով: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի ԵՄ-ից կամ ասոցացված պետություններից դուրս որևէ այլ պետության կամ կազմակերպության:

1) Այն տարածվում է ողջ Եվրոպական Միության վրա (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Զուլնաստան, Զուլնգարիա, Մալթա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Շվեդիա, Չեխիայի Զանրապետություն, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրների վրա (Լորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն):

©Եվրոպական Միություն 2014
Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:

Կոնտակտային տվյալներ

Eurodac-ի վերահսկողի ինքնությունը և կոնտակտային տվյալները

Միգրացիայի վարչության Ներքին գործերի նախարարություն

Լ. Սապիեգոս փողոց. 1, 10312 Վիլնյուս
հեռ.+370 5 271 7112

Էլ. փոստ: md.rastine@vrm.lt

<http://www.migracija.lt>

Ազգային վերահսկողության մարմնի (Տվյալների պաշտպանության) կոնտակտային տվյալները

Պետական տվյալների պահպանության տեսչություն

Ա. Յոզապավիչիաուս փողոց 6,
09310 Վիլնյուս

հեռ.+370 5 271 2804, +370 5 279 1445

Էլ. փոստ: ada@ada.lt

<https://www.ada.lt>

Եթե մեր իշխանությունները գտնեն, որ միջազգային պաշտպանության համար պետք է դիմեիք այլ երկրում, և որը պետք է պատասխանատու լիներ Ձեր դիմումը քննելու հարցում, ապա Ձեզ կտրամադրվի առավել մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչ ընթացակարգ է հաջորդելու և այն ինչպիսի ազդեցություն կունենա Ձեր և Ձեր իրավունքների վրա:



«Ես գտնվում եմ Դուբլինի ընթացակարգում. ի՞նչ է դա նշանակում»:

Տեղեկատվություն միջազգային պաշտպանության համար դիմողների վերաբերյալ Դուբլինի Կանոնակարգի մասին՝ համաձայն թիվ 604/2013 Կանոնակարգի (ԵՄ) 4-րդ հոդվածի

doi:10.2847/20685

ISBN 978-92-9243-163-1

